

Արա Զարգարյան
Մանուկ Արեղյանի անվան Գրականության ինստիտուտի
կրթության գիտաշխատող
Էլ. հասցե՝ zargaryanara1994@gmail.com
DOI: 10.53614/18294952-2024.1-180

ԼԵՎՈՆ ԱՐԻՍՅԱՆԻ ԵՎ ԱՄԱՏՈՒՆԻ ՎԱՐՂԱՊԵՏՅԱՆԻ ՆԱԽԱՏԻՊԵՐԸ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՊՈՆԶԻԱՅՈՒՄ

1930-ականները Խորհրդային Հայաստանի քաղաքական և հասարակական ամենաթեժ շրջաններից էր: Այդ շրջանի իրադարձություններն ու մարդիկ դարձան նախատիպեր Եղիշե Չարենցի համար, որոնց միջոցով բանաստեղծը ներկայացրեց այդ շրջանի Հայաստանի քաղաքական պատկերը: Չարենցի աչքից չէին կարող վրիպել Լևոն Արիսյանը և Ամատունի Վարդապետյանը: Լևոն Արիսյանը 1934 թվականին եղել է ՀԿԿ Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչը, իսկ Ամատունի Վարդապետյանը փոխարինել է սպանված Աղասի Խանջյանին և 1936-1937 թվականներին եղել է Կենտկոմի առաջին քարտուղար: Այս նախատիպերը դառնում են կատարվող իրադարձության կենտրոնում կանգնած կերպարներ: Չարենցն իր ստեղծագործություններում տալիս է քաղաքական պատկերն ու իր վերաբերմունքը վերոնշյալ քաղաքական գործիչներին: Հենց նրանք են կրում պատմական, քաղաքական ինֆորմացիան և դառնում գեղարվեստականացման սկզբունքին համապատասխան նախատիպ:

Հիմնաբառեր. Չարենց, նախատիպ, պոեզիա, քաղաքական, Հայաստան, Լևոն Արիսյան, Ամատունի Վարդապետյան:

Ներածություն

Եղիշե Չարենցի ստեղծագործություններում կան հայաստանյան քաղաքական տարբեր շրջանները, քաղաքական գործիչների նախատիպերն ու

դրանց գեղարվեստականացման սկզբունքները: Հայաստանյան քաղաքական դաշտում խորհրդային կարգերի հաստատումից հետո բացառիկ էր Մյասնիկյանը, ում մահը Չարենցի համար ծանր հարված էր: 1930 թվականին, երբ Կենտկոմի առաջին քարտուղար ընտրվեց Աղասի Խանջյանը, Չարենցի համար բացառիկ կերպար հանդիսացող Մյասնիկյանի բացը եկավ մասնակի լրացնելու Խանջյանը: Այս դեպքում ևս ազգային գաղափարախոսությամբ առաջնորդվող ղեկավարը չէր կարող հանդուրժվել առավել բարձր ատյաններում: Խանջյանի մահով Չարենցը արձանագրեց, որ նա մեր մեռնող վերջին արքայազնն է: Հետագայում արդեն երկիրն արյան ծով դարձրեց Ամատունի Վարդապետյանը: Չարենցի համար Ամատունուց հետո սկսված քաղաքական թռուրտները, և այդ ամենի կիզակետում կանգնած մարդիկ դարձան պետության ներսում տիրող քառը ներկայացնող նախատիպեր, որոնց շուրջը հյուսվող ստեղծագործությամբ Չարենցը հոյակապ ներկայացնում էր երկրում թևածող տրամադրությունը: Չարենցը գեղարվեստական պատկերով տվեց այդ շրջանի Հայաստանի քաղաքական պատկերը: Պատկերի կարևոր մասերից էին Ամատունի Վարդապետյանն ու Լևոն Արիսյանը:

Մեթոդ

Հոդվածի համար տեսական հիմք է հանդիսացել Եղիշե Չարենցի կողմից Ամատունի Վարդապետյանի ու Լևոն Արիսյանի մասին գրված ստեղծագործությունները: Աշխատանքն իրականացվել է հիմնականում գրականագիտության մեջ հայտնի հոգեբանական, պատմահամեմատական և կենսագրական մեթոդներով: Ստեղծագործություններում ամկա է Չարենցի հոգեվիճակի արտահայտումը ևս:

Արդյունքներ և քննարկում

Աղասի Խանջյանը Կենտկոմի քարտուղար ընտրվելուց հետո սկսեց հովանավորել հատկապես այն անհատներին, ովքեր կրում էին ազգային արժեքներն ու գաղափարախոսությունը: Խանջյանը դառնում էր Չարենցին, Մահարուն, Մկրտիչ Արմենին, Վահան Թոթովենցին և նմանօրինակ դիրքորոշում ունեցող այլ հեղինակներին կամրջողը: Այդ շրջանում սկսվում է լարվել Եղիշե Չարենցի և ՀԿ (ք) Կ Կենտկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ Լևոն Արիսյան (Գասպարյան, 1994, էջ 361) հարաբերությունները: Չարենցի և Խանջյանի հարաբերությունները ևս սկսում են սառչել հատկապես այն բանից հետո, երբ լուր է տարածվում, թե Չարենցը ցանկանում է սպանել Լևոն Արիսյանին: Այդ շրջանում Չարենցի բարոյահոգեբանական վիճակը շատ ծանր էր, և բանաստեղծը լարվում է Լևոն Արիսյանի դեմ, քանի որ նաև նա էր խոչընդոտում «Գիրք ձանապարհի»-ի տպագրությունը: Խանջյանը թույլատրել էր գրքի տպագրությունը և մեկնել էր արձակուրդ: Այդ շրջանում Արիսյանը և Զարմայր Աշրաֆյանը հորինում են այսպես կոչված «խանջյանական խումբ» հասկացողությունը և բնականաբար այդ խմբի անդամ էր համարվելու նաև Չարենցը: Արդյունքում կասեցվում է գրքի

տպագրությունը: Չարենցի գայրույթն այնքան մեծ էր, որ նա նամակներով դիմում է անգամ Ստալինին, ինչպես նաև Մարիետա Շահինյանին: Շահինյանին ուղարկված նամակում Չարենցը խոսում է նաև Ստալինին ուղարկված նամակի մասին: Նամակի տեքստից հասկանալի է դառնում, որ գրեթե հուսահատ վիճակում գտնվող Չարենցը փորձում էր անել ամեն ինչ, որպեսզի «Գիրք ձանապարհի»-ի դեմ արգելքը չեղարկվի.

«...Ինձ հեղ պատրված պատրմության մասին առաջին անգամ մանրամասնորեն Ձեզ գրեցի երեկ չէ առաջին օրը՝ վերջում խնդրելով, որ ինձ պաշտպան կանգնեք և, եթե հնարավոր է, այդ ամենի մասին տեղյակ պահեք ընկ. Սրացկուն և, եթե հնարավոր է, ընկ. ՍՏԱԼԻՆԻՆ:...Ձեզ հասցեագրած նամակին գրեցի փոքր նախաբան, այդ ամենը տեղավորեցի մի ծրարի մեջ և օրային փոստով ուղարկեցի ուղիղ.... ընկ. Ստալինին!!!»: (Չարենց, 1996, էջ 368)

Նամակում զգացվում է Չարենցի ծանր հոգեվիճակը: Չարենցի նպատակն էր վերսկսել «Գիրք ձանապարհի» գրքի տպագրությունը և պատասխանատվության ենթարկել տպագրությունը խոչընդոտող մեղավորներին: Արիսյանի կենսագրական մանրամասնությունները նյութ էին հանդիսանալու Չարենցի համար՝ գրելու նրան ծաղրող ու ձշմարտությունը ներկայացնող էպիգրամներ: Արիսյանին «ձոնված» տողերից առավել հայտնի են ու հետաքրքրական Լ.Ա. վերտառությամբ 1933 թվականին գրված 4 էպիգրամները: Էպիգրամներում Չարենցը հստակ ընդգծում է Արիսյանի՝ Հայոց բարությունն ու հայկականության փոխարեն կրեմլյան հրահանգները կատարելու մեծ ցանկությունը.

«Նա չի հանդուրժում նաիրյան լեզուն,–

Նա ռուսաց լեզվի դայրայլն է ուզում....

Ձգտում այսպես իր կտոր հացին–

Վելիկոդերժավ...այս որբ վանեցին....» (Չարենց, 1996, էջ 151):

Հաջորդ էպիգրամում Չարենցը Արիսյանի կերպարը մերկացնելուց զատ ցույց է տալիս նաև այդ նույն շրջանում Հայաստանում տեղի ունեցող գործընթացները: Այդ գործընթացներն ուղղված էին Աղասի Խանջյանի դեմ, իսկ նպատակն Արիսյանի կողմից Խանջյանին գահընկեց անելն ու իշխանությունը զավթելն էր: Բնականաբար գործընթացի վերևում կանգնած էր Լավրենտի Բերիան: Այդ իրադարձությունների անմիջական ազդեցությամբ է Չարենցը գրել Արիսյանին «ձոնված» իր հաջորդ էպիգրամը: Բերիայի և իր խմբի կողմից հայաստանյան իշխանության զավթման դեպքերը տեղի են ունեցել 1933 թվականի հոկտեմբեր–նոյեմբեր ամիսներին, իսկ Արիսյանի մասին էպիգրամները Չարենցը գրել է նույն թվականի նոյեմբերի 30–ին: Էպիգրամներում ձշգրիտ ներկայացվում են տեղի ունեցած իրադարձությունները.

«Որտեղից եկավ և ո՞նց ընկավ

Աղասու Ցեկան այս հյուրընկալ

Եվ աչքը դրեց նրա հացին

Վելիկոդերժավ...այս վանեցին....» (Չարենց, 1996, էջ 151):

Արիսյանի կողմից Խանջյանի «հացին տիրանալը» Բերիայի հեղափո-

խության փորձի գեղարվեստականացումն էր: Արիսյանի կողմից ռուսամետ գործողություններ իրականացնելը հստակ երևում էր Չարենցի՝ Արիսյանի մասին գրված առաջին էպիգրամում: Հաջորդ էպիգրամում Չարենցը շարունակում է ներկայացնել Արիսյանի գաղափարական աշխարհը: «Նորք» ամսագրում 1922 թվականին տպագրվում է Չարենցի «Երկիր Նաիրի» վեպի առաջին մասը: Տպագրված առաջին տարբերակում Չարենցը ռուսների փոխարեն օգտագործում է սոխ ձևակերպումը.

«Ամենամեծ նորությունը, վոր նայիրյան չե եւ նույնիսկ անընտել, անհասկանալի յե թվացել սկզբում րեղացիների աչքին-յերկայությունագիծն ե՛՛ ձգված տխրերի րիրապետության որով՝ քսան րարի առաջ.....» (Չարենց, 1922, էջ 19):

Կամ այս հատվածը.

«Ես րնաքանդի տխր մի ինչեր արեց» (Չարենց, 1922, էջ 20):

1933 թվականին Արիսյանին ուղղված էպիգրամի այս օրինակում Չարենցը դարձյալ հիշում է «սոխը».

«...Մեծացել է նա Վանում,

Բայց.... «սոխի» հոտ է հանում....» (Չարենց, 1996, էջ 151):

Չարենցի աչքից չի վրիպել անգամ Արիսյանի կինը, ով ազգությամբ հրեա էր: Մարիա Իգրաիլովնա Լոկչինսան 1934–1937 թվականների եղել է ՀԿ (բ) Կ Կենտկոմի արդյունաբերության և տրանսպորտի բաժնի վարիչը: Նա Հայաստանում կարևոր պաշտոն ուներ: Չարենցը «Նրա ԿՆՈՋԸ» էպիգրամը գրել է Մարիայի՝ պաշտոնավարման շրջանում՝ 1935 թվականի ապրիլի 9-ին: Չարենցը շեշտում է Մարիայի ոչ հայկական ծագումն ու բարձր պաշտոն ունենալը, որով օտարազգի մեկը հայ մարդուն կարող է մեղադրել ինչ-որ հանցանքի մեջ.

«Դու՛ստր Իսրայելի և կին վանեցու,-

Դու պիտի արդյոք մեզ ամբաստանես

Մեր «ազգայնական» մեղքերի համար....» (Չարենց, 1996, էջ 153):

Խոսելով Չարենց–Արիսյան լարվածության, և Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին, հարկ է նշել, որ այդ շրջանում տեղի ունեցող կարևոր իրադարձությունները չէին վրիպում Չարենցի աչքից, և այդ ամենն իր արձագանքն էր ստանում բանաստեղծի գրչով: Քաղաքական գործիչներն իրենց հերթին Չարենցի բանաստեղծական համակարգում հանդիսանում էին կարևոր նախատիպեր: Հարկ է խոսել նաև Ամատունի Վարդապետյանի մասին, ով ևս Չարենցի ստեղծագործություններում ունի իր գեղարվեստական երանգը:

1936 թվականի հուլիսի 9-ին սպանվում է ՀԿ (բ) Կ Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանը: Այդ իրադարձությունից հետո սկսվում է Չարենց–Խանջյան բանաստեղծական «գրույցը» (Զարգարյան Ա., 2022, էջ 98–109): Չարենցը գրում է իր «Դոֆինը Նայիրական» սոնետների շարքը: Խանջյանի մահվամբ Չարենցի գաղափարական աշխարհը փոխվեց: Նա արդեն գիտակցում էր, որ Խանջյանի կորուստը մեծ արյունահեղության առաջին նոտան էր,

իսկ Խանջյանի կորստով ավարտվեց հայոց միֆը: Խանջյանին փոխարինելու եկած Ամատունի Վարդապետյանը ևս չէր կարող վրիպել բանաստեղծի աչքից: Սկզբնական շրջանում Չարենցը որոշում է Ամատունու հետ առձակատման չգնալ, այլ հույսեր կապել, դրական ինչ-որ բան քաղել: Ամատունին Կենտկոմի առաջին քարտուղար նշանակվում է 1936 թվականի սեպտեմբերին, իսկ արդեն հոկտեմբերին Չարենցը գրում է «Կապված դաշինքով անապական» գործը, որում ողջունում է Ամատունու իշխանության գալը.

«Հղում եմ ես իմ ուղերձը քեզ

Լցված հավատով լոկ այդ անհուն,— (Չարենց, 1996, էջ 53):

Սակայն Չարենցի հույսերը կամաց-կամաց սկսում են մարել: Հայ գրողների, մտավորականների դեմ ձնշումները նոր թափ են ստանում: 1936 թվականին Գրողների միությունից հեռացվում են Բակունցը, Ալազանը, Վանանդեցին, Թոթովենցը, Մահարին, Նորենցն ու Տեր-Սիմոնյանը: Չարենցի դեմ ձնշումները սկսվեցին գրականագետ Վալերի Կիրպոտինի զեկուցումներից հետո, որում նա Չարենցին մեղադրում է նացիոնալիստների բանակում լինելու մեջ (Չարենց, 1996, էջ 541):

Ձուգահեռաբար գործի է անցնում նաև Ամատունին: Չարենցը Ամատունուն նվիրված «Ազատ է ու ջինջ իմ պոետական...» վերնագրով պոեմ է գրում, որտեղ ներկայացնում է իր մտորումները: Պոեմում բանաստեղծն ընդգծում է իր մարդկային ու պոետական մեծությունը.

«Եվ ոչ մի «մեծի» չի շողորորթել» (Չարենց, 2017, էջ 104):

Պոեմում ընդգծվում է նաև Ամատունու ոչ հայանպաստ դիրքորոշումն ու օտարին ծառայելու ցանկությունը: Չարենցը պոեմում անդրադառնում է Լեւինի նկատմամբ իր բարեհաճ վերաբերմունքին, իսկ պոեմի վերջում հերթական անգամ ընդգծում է իր մուսայի անկաշառ լինելն ու Չարենց պոետի, քաղաքացու բարձր դիրքը այդ ժամանակաշրջանի գրողների կողքին: Սկսվում է Չարենցի կողմից Ամատունու նախատիպի քաղաքական ու մարդկային գործունեությանն ուղղված ջախջախիչ բանաստեղծական պատասխանը: Պոետն արդեն գիտակցում էր, որ այլևս կորցնելու ոչինչ չունի: Իր «Էքսպրոնտ» էպիգրամում նա հստակ նշում է Ամատունու կողմից Բերիային դավադիր գրություններ ուղղելու մասին.

«Ինչո՞ւ է գրում Ամատունին.

Դե, որովհետև-նա մայր ունի

Եվ մրքի վսեմ գազաթ ունի» (Չարենց, 2017, էջ 147):

Չարենցն Ամատունուն հիշել է նաև իր 40-ամյակի օրը՝ առավոտյան, և գրել է «Ողբ բանաստեղծի» ստեղծագործությունը, որն ունի «Սիրելի Ամատունուն» ընծայականը: Բանաստեղծության բովանդակության մեջ Չարենցը հերթական անգամ ակնարկում է այդ շրջանում կրեմլահպատակ հայ բանաստեղծների մասին, ինչպես նաև բացառում, որ ինչ-որ մեկը կասկածի տակ կդնի իր գրի ամրությունն ու ազնվությունը.

«Չի հանդգնել ո՛չ մի ձեռք դեռ օրերում մեր այս լույս-

*Գցել արվեր կասկածի, կամ քծնության նեղել քար-
Պոեդրական իմ խոսքի ադամանդի նման պարզ
Եվ բյուրեղի նման կարծր, անկուրելի հայելու.....»* (Չարենց, 2017, էջ 186):

Ստեղծագործության մեջ երևում են Չարենցի մտորումները, որոնք կրկին պտտվում էին ազգային ու անձնական ողբերգության, լքվածության ու դեպի մահ գնալու շուրջ: 1935–1937 թվականների Հայաստանի քաղաքական թոհուրոհի, ինչպես նաև գրական դաշտում տեղի ունեցող իրադարձությունների և դրանց շուրջ Չարենցի մտորումների մասին բանաստեղծի գեղարվեստական ստեղծագործություններից գատ շատ մեծ ասելիք ունի նաև «Հիմնականից հիմնականը» գրառումը: (Չարենց, 1996, 258–260) Գրառման մեջ հարցադրումների շրջանակն ընդգրկում է 1935–1937 թվականները: Գրառումը, որ տեղ–տեղ ներկայացված է կողավորված նախադասություններով ու բառերով, ներկայացնում է ժամանակաշրջանի քաղաքական և դրանից բխող գրական խնդիրները: Չարենցն ինքը գրառման վերևում ընդգծում է, որ մտքերը պտտվում են գրական–հասարակական դաշտի շուրջ:

*«Իմ բոլոր նյութերն ու մտքերն ունեն միմիայն ԳՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ան-
ցուդարձի բնույթ, որից և ես եզրակացնում եմ մնացածը»* (Չարենց, 1996, էջ 258):

Չարենցի այս գրառումը շատ ծանր նյութ է, որում նա ներկայացնում է իր շուրջ կատարվող գործողությունները, դրանց տրված իր գնահատականը և այդ գնահատականից բխող վերջնական եզրակացությունները: Չարենցը այստեղ գրում է 1936 թվականին Ամատունու հետ ունեցած իր հանդիպման մասին, որին ներկա է եղել նաև Գևորգ Աբովը: Չարենցը տարակուսում է, որ այդ գրույցը հետագայում չօգտագործվի որպես հարցաքննություն: Իրադարձությունների փաստագրական վերլուծության մեջ նա հիշատակում է բազմաթիվ հարցեր ու մարդկանց անուններ: Շրջանառվում են Ալազանի, Վշտունու, Արիսյանի անունները, խոսք կա նաև Ակսել Բակունցի հետ իր հարաբերությունների ու դրանց խզման մասին, սակայն այս ամենը գրված չէ երկար–բարակ տեքստերով, ընդամենը կետային բառեր, բառակապակցություններ կամ ակնարկներ, այլ կերպ ասած՝ տեղեկությունը ներկայացվում է չարենցյան այդ շրջանին բնորոշ բառ–խորհրդանիշի ձևով: Գրառման մեջ երկու անգամ հիշատակվում է նաև Խանջյանի անունը: Առաջին անգամ Խանջյանի անունը Չարենցը կիրառում է «*Ամենից առաջ՝ գարնանդիս, որ գործ ունեն ԳՐՈՂԻ հեղ–գրույց և ոչ հարցաքննություն*» գրության աջ կողմում: Ուղղանկյուն վանդակի մեջ գրված է՝ «*Կարող եմ պատկել Ա–ու մուր*»: Այստեղ հստակ ակնարկում է Աղասի Խանջյանին, որն արդեն մահացել էր: Ծանր ապրումների մեջ գտնվող բանաստեղծը մտածում էր լքել այս աշխարհը, կամ իր բառերով ձևակերպած՝ պատկել Աղասու մոտ: Չարենցը հերթական անգամ երկընտրանքի առաջ է. մնալ ու պայքարել այդ անառողջ մթնոլորտում, կամ գնալ դեպի մահ: Չարենցը, որպես վերջնարդյունք ընտրեց գիտակցված պայքարն ու մահը:

Եզրակացություն

1930–ականներին Խորհրդային Հայաստանում քաղաքական և հասարակական ամենաթեժ շրջանն էր: Այդ օրերի իրադարձություններն ու մարդիկ դառնում են Չարենցի ստեղծագործական համակարգի կենդանի մոդելները: Քաղաքական գործիչներ Ամատունի Վարդապետյանն ու Լևոն Արիսյանը նախատիպեր են, որոնց գործունեությունը արձագանք է ստանում Չարենցի ստեղծագործություններում: Գրողը ստեղծագործություններում ներկայացնում է նաև իր անձնական վերաբերմունքն ուղղված նախատիպերին: Նախատիպերը դառնում են կատարվող իրադարձության կենտրոնում կանգնած կերպարներ: Հենց նրանք են կրում պատմական ինֆորմացիան և դառնում գեղարվեստականացման սկզբունքին համապատասխան նախատիպ:

Օգտագործված գրականության ցանկ

- Գասպարյան, Դ. (2017). *Գիրք Մնացորդաց*, Տիգրան Մեծ հրատ., Երևան:
Գասպարյան, Դ. (1994). *Փակ դռների գաղտնիքը*, Ապոլոն հրատ., Երևան:
Չարենց, Ե. (1992). Յերկիր Նայիրի, *Նորք ամսագիր*, N 1, Երևան:
Չարենց, Ե. (1996). *Նորահայտ էջեր*, ԵՊՀ հրատ., Երևան:
Ջարգարյան, Ա. (2022). Եղիշե Չարենցի և Աղասի Խանջյանի հետմահու երկխոսությունը, *Գիրական տեղեկագիր*, Վանաձոր, 2022:

References

- Gasparyan, D. (2017). *Girq Mnacordac* [The rest book], Big Tigran pub., Yerevan, (In Arm).
Gasparyan, D. (1994). *Pak drneri gaxtniqy* [The secret behind closed doors], Apolon pub., Yerevan, (In Arm)
Charenc, E. (1992). Erkir Nairi [Country Nairi], *Norq Magazine*, N 1, Yerevan. (In Arm)
Charenc, E. (1996). *Norahayt Ejer* [Newly found pages], YSU pub., Yerevan. (In Arm)
Zargaryan, A. (2022). Exishe Charenci ev Axasi Xanjyani hetmahu erkxosutyuny [The posthumous dialogue between Yeghishe Charenc and Agassi Khanjyan], *Scientific bulletin*, Vanadzor. (In Arm)

Արա Ջարգարյան

Младший научный сотрудник Института литературы

имени Манука Абеяна

Эл. адрес: zargaryanara1994@gmail.com

ПРОТОТИПЫ ЛЕВОНА АРИСЯНА И АМАТУНИ ВАРДАПЕТЯНА В ПОЭЗИИ ЕГИШЕ ЧАРЕНЦА

1930–е годы были одним из самых горячих политических и социальных периодов в Советской Армении. События и люди того периода стали для Егише Чаренца прототипами, через которые поэт представил политический

образ Армении того периода. Левон Арисян и Аматауни Вардапетян не могли ускользнуть от взгляда Чаренца. Левон Арисян был заведующим отделом пропаганды и агитации ЦК КПК в 1934 году, а Аматауни Вардапетян сменил убитого Агасси Ханджяна и был первым секретарем ЦК в 1936–1937 годах. Эти прототипы и становятся персонажами, стоящими в центре мероприятия. В своих произведениях Чаренц дает политический образ и выражает свое отношение к вышеупомянутым политикам. Именно они несут историко-политическую информацию и становятся прототипами, соответствующими принципу художественности.

Ключевые слова: Чаренц, прототип, поэзия, политика, Армения, Левон Арисян, Аматауни Вардапетян.

Ara Zargaryan

Junior researcher of the Institute of Literature after Manuk Abeghyan

Email: zargaryanara1994@gmail.com

PROTOTYPES OF LEVON ARISYAN AND AMATUNI VARDAPETYAN IN THE POETRY OF YEGHISHE CHARENTS

The 1930s was one of the hottest political and social periods in Soviet Armenia. The events and people of that period became prototypes for Yeghishe Charents, through which the poet presented the political image of Armenia of that period. Levon Arisyan and Amatuni Vardapetyan could not escape Charents' eyes. Levon Arisyan was the head of the propaganda and agitation department of the CPC Central Committee in 1934, and Amatuni Vardapetyan replaced the murdered Agassi Khanjyan and was the first secretary of the Central Committee in 1936–1937. These prototypes become the characters standing in the center of the event. In his works, Charents gives a political image and his attitude to the above-mentioned politicians. They embody historical and political information and serve as prototypes adhering to the principle of artistic representation.

Key words: Charents, prototype, poetry, political, Armenia, Levon Arisyan, Amatuni Vardapetyan.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2024թ. հունվարի 30-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2024թ. փետրվարի 11-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2024թ. մարտի 29-ին: